ՀՍՍՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ (1939—1959)

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սոցիալիստական շինարարության ինչպես առաջին տարիներին, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ առաջնակարգ դերը պատկանել է կոլտնտեսային գյուղացիությանը։ Որո՞նք են դրա հիմնական պատճառները։

Հայտնի է, որ կապիտալիզմի օրոք քաղաքը տնտեսական, սոցիալական ու կուլտուրական ուժեղ հետամնացության էր ենթարկել գյուղին՝ այն դարձնելով լոկ արդյունաբերական հումքի և գյուղատնտեսական մթերքների աղբյուր։ Սոցիալիստական հեղափոխությունն արմատապես լուծեց այդ հակադրությունը. կոլտնտեսային կարգերի հաղթանակը սկիզբ դրեց գյուղի ու քաղաքի միջև եղած էական տարբերությունների վերացմանը։ Գյուղում, սակայն, սոցիալ-տնտեսական ու կուլտուրական շատ տարբերություններ դեռևս պահպանվում էին։

Սոցիալիստական ինդուստրիայի համեմատությամբ, որպես թույլ արտադրողական ուժեր ունեցող ժողովրդատնտեսական ճյուղ, գյուղատնտեսությունը, բնականաբար, ավելի մեծ թվով աշխատուժի պահանջ ուներ։ Այս հանգամանքը և արդյունաբերության ոչ բավարար զարգացումը տարիներ շարունակ հանգեցնում էին գյուղական վայրերում և կոլտնտեսային արտադրության մեջ մեծաթիվ բնակչության կենտրոնացմանը։ Այսպես, օրինակ, 1939 թ. հանրապետության 1282,3 հազար բնակչից 366,4 հազարը կամ 28,6%-ը բնակվում էին քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում, իսկ 915,9 հազարը կամ 71,4%-ը՝ գյուղական վայրերում[1]։ Ինչ վերաբերում է հանրային տնտեսության երկու հիմնական ճյուղերում (պետական և կոլտնտեսային) ընդգրկվածների թվաքանակին, ապա նրա ավելացումն ուղեկցվել է գյուղատնտեսության մեջ աշխատողների բացարձակ աճով։ Նախապատերազմյան տարում, օրինակ, Հայկական ՍՍՀ կոլտնտեսային արտադրության մեջ աշխատողների թիվը կազմում էր 286,3[2] հազար, իսկ պետական սեկտորում՝ 155,7 հազար[3]։ Ինչպես նկատում ենք, կոլտնտեսության մեջ զբաղվածները կազմում են ընդհանուր բնակչության 22,3, իսկ պետական արտադրությունում զբաղվածները՝ 12%-ը։

Այժմ տեսնենք, թե սոցիալ-տնտեսական դրությունն ինչպիսի հիմք է ծառայում կոլտնտեսային գյուղացիության համար՝ դառնալու բանվոր դասա-

---

[1] «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», Ереван, 1967, с 20.

[2] *Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 163, ց. 21, գ. 1145, թ. 1 (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ)։*

[3] «Труд в Армянской ССР», Ереван, 1976, с. 29.

կարգի շարքերի համալրման հիմնական աղբյուր։ Հանրահայտ է, որ սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը հսկայական միջոցառումներ ձեռնարկեցին գյուղի սոցիալիստական վերափոխման և նոր տիպի հասարակական հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ։ Ագրարային վերափոխումները և կոլտնտեսային կարգերի հաղթանակն ու ամրապնդումը գյուղացիության կյանքում առաջ բերեցին սոցիալ-տնտեսական խոր տեղաշարժեր։ Վերածվելով սոցիալիստական հասարակական ուժի՝ գյուղացիությունը սկսեց վարել կոլեկտիվ խոշոր տնտեսություն, որի աստիճանական զարգացումը տանում էր և այժմ էլ շարունակում է տանել դեպի հանրային սեփականության երկու ձևերի մերձեցումը։

Արմատապես փոխվել էր նաև գյուղացու հոգևոր կերպարը, բարձրացել նրա կուլտուր-կրթական մակարդակը, աճել էր քաղաքական դիտակցությունը։ Ահա թե ինչու ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ առաջնակարգ տեղը գրավում էր գյուղացիությունը։ Սովետական Հայաստանում, օրինակ, 1939—1940 թթ. աշխատանքային տարիքի կոլտնտեսային բնակչության թիվը կրճատվեց մոտ 17,5 հազար մարդով[4], որի հիմնական մասը (67%-ը) համալրել էր բանվոր դասակարգի շարքերը։ Աշխատավորական երկու դասակարգերի մեջ տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերի հիմքում, բանվոր դասակարգի թվաքանակի ավելացման իմաստով, ընկած էին օբյեկտիվ պատճառներ։

Նախապատերազմյան տարիներին Հայաստանում ևս զգալի աշխատանք կատարվեց կոլտնտեսությունների տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման ուղղությամբ։ Գյուղատնտեսական արտադրության մեջ ձեռքի աշխատանքի մի մասի փոխարինումը մեքենայականով՝ խնայեց հսկայական թվով մարդկային ռեսուրսներ։ Սոցիալիստական ինդուստրիայի համակողմանի զարգացումը, իր հերթին, լայն հնարավորություններ էր ստեղծում գյուղի ազատ ձեռքերն արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի մեջ ընդգրկելու համար։

Ասվածից չի կարելի միակողմանի եզրակացության հանգել և դեպի պետական արտադրություն գյուղացիության տեղաշարժի հիմքում տեսնել միայն օբյեկտիվ պատճառներ։ Անշուշտ դրանում մեծ էր նաև սուբյեկտիվ գործոնների դերը, գործոններ, որոնք առանձին դեպքերում դանդաղեցնում կամ արագացնում էին գյուղացիության հոսունության տեմպերը։ Այստեղ քննության առնենք բազում պատճառներից մեկը՝ անձնական օժանդակ տնտեսության օրինակը։ Մինչպատերազմյան տարիներին ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում շատ կոլտնտեսականներ, խախտելով գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, հանրային հողի հաշվին ընդարձակել էին իրենց անձնական օժանդակ տնտեսությունները։ Բազմաթիվ կոլտնտեսականներ, թուլացնելով կապը հանրային տնտեսության հետ, մեծ մասամբ զբաղվում էին անձնական օժանդակ տնտեսությամբ։ Դրա հետևանքով կոլտնտեսային արտադրությունում պակասում էր աշխատուժը և ընկնում աշխատանքի արտադրողականությունը։

---

4 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԳԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1144, թ. 2, գ. 1145, թ. 1—2։

Անձնական օժանդակ տնտեսությունում գյուղացու կենտրոնանալը բացասաբար էր անդրադառնում նաև պետական արտադրությունում աշխատուժի համամասնության վրա, քանի որ կոլտնտեսային արտադրության մեջ աշխատուժի կրճատման դեպքում թուլանում էին բանվոր դասակարգի շարքերը համալրելու նրա հնարավորությունները։

Ելնելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1939 թ. մայիսյան պլենումի որոշումներից[5], ՀԿԿ Կենտկոմի պլենումը նույն թվականի հունիսին քննարկեց և բացահայտեց հանրապետության կոլտնտեսություններում հողօգտագործման բնագավառում տեղ գտած խախտումները և ուղիներ մշակեց դրանք վերացնելու համար[6]։

Ինչ վերաբերում է այն սուբյեկտիվ գործոններին, որոնք նպաստել են կոլտնտեսային արտադրությունից գյուղացիության արտահոսքին, ապա դրանցից առաջինը առնչվում է վերոհիշյալ պլենումի որոշման հետ՝ յուրաքանչյուր աշխատունակ կոլտնտեսականի համար աշխօրերի տարեկան պարտադիր մինիմում սահմանելու մասին։ Այն չկատարելու դեպքում կոլտնտեսականը համարվում էր կոլտնտեսությունից դուրս մնացած։ Հարկ է նշել, որ ինչպես Միության շատ հանրապետություններում, այնպես էլ Հայաստանի առանձին կոլտնտեսություններում այդ որոշումը կենսագործում էին մեխանիկորեն, առանց հաշվի առնելու սահմանված նորման չկատարելու հարգելի պատճառները[7]։ Միայն դրա հետևանքով արդեն 1940 թ. հանրապետության կոլտնտեսություններից դուրս մնաց ավելի քան 8 հազար մարդ, որից 6 հազարը կին էր[8]։

Նախապատերազմյան տարիներին կոլտնտեսություններից գյուղացիության տարերային հոսունության հիմքում ընկած էին այլ կարգի սուբյեկտիվ պատճառներ ևս։ Դրանցից էր արտադրության զարգացմամբ, նրա եկամտաբերության ավելացմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության սկզբունքի խախտումը։ Այսպես, ՀՍՍՀ կոլտնտեսությունների 1940 թ. տարեկան հաշվետվության տվյալներով մոտ 45,6 հազար կոլտնտեսականներ գտնվում էին արտագնացության մեջ[9], իսկ 16 հազարը (աշխատունակներ) չէին վաստակել ոչ մի աշխատանքային օր[10]։ Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հսկայական թվով գյուղական բնակչության առկայության պայմաններում հիշյալ գործոնները սուբյեկտիվ էին այնքանով, որքանով կոլտնտեսություններից դեպի պետական արտադրություն գյուղացիության տեղաշարժերի արագացման պատճառ էին դառնում անկախ նրանից, թե կոլտնտեսային արտադրության աշխատանքները մեքենայացման ինչպիսի աստիճանում էին և սոցիալիստական ինդուստրիան ինչ չափով էր աշխատուժի պահանջ հարուցում։ Խոսքն այն մասին է, որ սուբյեկտիվ գործոնները միայն խախտում էին հիշյալ տեղաշարժերի համաչափությունը։

Այժմ տեսնենք թե նախապատերազմյան տարիներին Հայկական ՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունը բանվոր դասակարգի գլխավորապես որ ջո-

---

5 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս III, Երևան, 1955, էջ 505—507։

6 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Երևան, 1967, էջ 400։

7 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 21, գ. 1145, թ. 1։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, թ. 2։

կատներն էր համալրում և ինչ ճանապարհով։ Տվյալները վկայում են, որ գյուղացիության հիմնական մասը համալրել է տրանսպորտի, շինարարության, հասարակական առևտրի և կենցաղ-սպասարկման ոլորտի աշխատողների շարքերը։ Այս ճյուղերում զբաղմունք գտնելը պայմանավորված էր ինչպես հանրապետության միջին և, մասամբ, փոքր քաղաքներում, այնպես էլ գյուղերում արդյունաբերական ձեռնարկությունների սակավ լինելու կամ չլինելու փաստի հետ։ Բանն այն է, որ նախապատերազմյան տարիներին գյուղական շրջաններին մոտ գտնվող փոքր կամ միջին մեծության քաղաքները չունեին անհրաժեշտ քանակությամբ արդյունաբերական ձեռնարկություններ՝ նոր բանվորական ուժն օգտագործելու համար։ Ավելացնենք նաև, որ այդ տարիներին կոլտնտեսային արտադրությունից դուրս եկած գյուղացիության հիմնական մասը տնտեսական և կենցաղային պայմանների բերումով կապերն անմիջապես չէր կտրում գյուղից։ Այսպես, 1939—1940 թթ. կոլտնտեսություններից պետական արտադրություն մտած 11,8 հազար մարդուց 11,5 հազարը շարունակում էր բնակվել գյուղում[11]։ Այս հանգամանքը, բնականաբար խոչընդոտում էր արդյունաբերությունը համալրելու նրանց հնարավորությունը։

Բացի վերոհիշյալից, պետք է նկատի ունենալ մի հանգամանք ևս։ Կոլտնտեսային գյուղացիությունն իր կուլտուր-տեխնիկական մակարդակով բավականին զիջում էր արդյունաբերական բանվոր դասակարգին։ Դա բացատրվում է մի կողմից՝ կոլտնտեսային արտադրության մեքենազինվածության համեմատաբար թույլ վիճակով, մյուս կողմից՝ քաղաքայինի համեմատությամբ գյուղական բնակչության հանրակրթական ցածր մակարդակով։ Հետևաբար, նոր բանվորականացող գյուղացիությունը նախապես կարող էր լրացնել ոչ արդյունաբերական բանվորների շարքերը։ Այստեղ չենք շտապում կարծիք հայտնել, թե այդ տարիներին բանվորականացող գյուղացիությունն իր բանվորական առաջին մկրտությունը ստանում էր շինարարության մեջ և տրանսպորտում, ապա նոր մտնում արդյունաբերություն։ Նրանց որոշ մասը (գլխավորապես երիտասարդությունը) արդյունաբերություն էր մտնում ուղղակի աշխատանքային ռեզերվների հաստատություններից՝ մասնագիտական կրթություն ստանալուց հետո։

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1939—1940 թթ. հանրապետության կոլտնտեսային գյուղացիությունից բանվոր դասակարգի շարքերը համալրած 11,8 հազար մարդուց 1,6 հազարը կամ 13,4%-ը արտադրություն (գլխավորապես արդյունաբերություն) էր մտել աշխատանքային ռեզերվների հաստատություններից[12], իսկ մնացածը կամ 86,6%-ը աշխատանքի էր անցել տրանսպորտում, շինարարության մեջ, առևտրի ու կենցաղ-սպասարկման այլ ոլորտներում, որը կազմել է բանվոր դասակարգի քանակական աճի 54%-ը[13]։ Սակայն հարկ է նկատել, որ ի տարբերություն նախորդ հնգամյակի

---

11 Նույն տեղում, թ. 1—2։

12 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 591, ց. 7, գ. 23, թ. 4) տվյալների հիման վրա։ Աշխատանքային ռեզերվների ֆաբգործուսի դպրոցներում և ուսումնարաններում սովորողների մեջ գյուղացիության բաժինը որոշելիս նկատի ենք ունեցել այն հանգամանքը, որ այդ տարիներին նշված հաստատություններում սովորողների մոտ 70%-ը կազմում էր գյուղական երիտասարդությունը։

13 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 163, ց. 21, գ. 1144, թ. 1—2, գ. 1145, թ. 1—2) և «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)» (Ереван, 1940, с. 113), «Труд в Армянской ССР» (с. 29) ժողովածուների տվյալների հիման վրա։

(1933—1937), երրորդ հնգամյակում այդ աղբյուրի հոսունության տեմպերն ավելի ցածր էին։ Դա բացատրվում է նրանով, որ նախապատերազմյան տարիներին երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու նպատակով գյուղատնտեսական մեքենաներ ու սարքավորումներ արտադրող բազմաթիվ ձեռնարկություններ անցան ռազմական պատվերների կատարմանը։ Նվազեց գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը։ Աշխատանքների հիմնական մասն արդեն կատարվում էր ձեռքով, որի հետևանքով այդ արտադրության մեջ նվազում էր ազատ աշխատուժի տոկոսը։

Այժմ անցնենք համալրման ձևերի հարցին։ Շարադրանքից հետևում է, որ նախապատերազմյան տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը բանվոր դասակարգի շարքերը համալրում էր երկու ճանապարհով՝ կազմակերպված (աշխատանքային ռեզերվների հաստատություններից) և անկազմակերպ (երբ մի արտադրությունից մյուսին անցնելը կատարվում է ինքնակամ)։ Ինչպես Միության մեջ, այնպես էլ Հայաստանում նախապատերազմյան տարիներին կոլտնտեսային գյուղացիության կողմից բանվոր դասակարգի շարքերի համալրումը հիմնականում կատարվում էր անկազմակերպ։

Կոլտնտեսային գյուղացիությունը համալրման աղբյուրի իր առաջատար դերը պահպանեց նաև պատերազմի տարիներին։ Սակայն, ի տարբերություն նախապատերազմյանի, այժմ էապես փոխվեցին համալրման հնարավորությունները։ Պատերազմական դրության հետևանքով զգալիորեն նվազեց գյուղական աշխատունակ բնակչության թիվը։ Կրճատվեցին նաև գյուղատնտեսական մեքենաների համակազմն ու բանող անասունների գլխաքանակը։ Այսպես, Հայկական ՍՍՀ կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված երկսեռ բնակչության թիվը 1940 թ. 286,3 հազարի դիմաց 1941 թ. երկրորդ կեսին կազմեց 248,6 հազար մարդ կամ կրճատվեց 13%-ով[14]։ Նույն ժամանակաշրջանում բանվոր-ծառայողների թիվը 155,7 հազարից նվազեց մինչև 123 հազարի[15]։

Պատերազմի առաջին իսկ օրերից բանվորական ուժի նկատմամբ արտադրության պահանջների սրությունը սովետական պետությանը հարկադրեց գտնելու նոր ձևեր ու մեթոդներ՝ գյուղական աշխատուժը պետական և կոլտնտեսային արտադրությունների մեջ արդյունավետ օգտագործելու համար։ Այդպիսի ձև դարձավ կոլտնտեսային աշխատունակ բնակչության մոբիլիզացումը։ Պետությունը ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերում աշխատելու համար վերջիններիս մոբիլիզացնելով՝ ելակետ ուներ գյուղատնտեսական աշխատանքների սեզոնային բնույթը։ Այն հնարավորություն էր տալիս կոլտնտեսականների ուժերը (մշտական կամ ժամանակավոր) օգտագործել պետական, իսկ քաղաքային բնակչությանը՝ կոլտնտեսային արտադրության մեջ։

Պատերազմի տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերության էությունը, ինչպես նշում է Յու. Հարությունյանը, այն էր, որ գյուղը քաղաքին տալիս էր գլխավորապես մշտական աշխատողներ՝ փոխարենը ստանալով սեզոնային[16]։

---

14 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, գ. 1145, թ. 1, գ. 1146, թ. 1—2։

15 Նույն տեղում, ց. 15, գ. 229, թ. 1։

16 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1963, с. 316—317.

1941—1945 թթ. կոլտնտեսային գյուղացիությունը բանվոր դասակարգի շարքերը շարունակում էր համալրել նաև հավաքագրման ճանապարհով։ ՍՍՀՄ ժողկոմխորհը 1941 թ. դեկտեմբերի 29-ին որոշում ընդունեց քաղաքային և գյուղական երիտասարդությունից ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցների համար կադրեր հավաքագրելու մասին[17]։ Սովետական Հայաստանում նույնպես մեծ աշխատանք ծավալվեց երիտասարդությանն աշխատանքային ռեզերվների հաստատություններում ընդգրկելու համար։ Հայկական ՍՍՀ ժողկոմխորհը շրջանային ու քաղաքային սովետների գործադիր կոմիտեներին հանձնարարեց 1942 թ. հունվարի 15-ից մինչև փետրվարի 1-ը արական սեռի 16—17 տարեկան և իգական սեռի 16—18 տարեկան 2000 պատանիներ ու աղջիկներ (1000-ը գյուղից) հավաքագրել ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցների համար[18]։ Արտադրությունը բանվորական ուժով համալրելու այս ձևը հաջողությամբ գործեց նաև պատերազմական մյուս տարիներին[19]։

Պատերազմի տարիներին կատարված զորահավաքը, բնակչության հավաքագրումն ու մոբիլիզացումը խոր փոփոխություններ առաջ բերեցին կոլտնտեսության անդամների և արտադրության մեջ զբաղվածների քանակական կազմում։

Աղյուսակ

Կոլտնտեսության անդամների և կոլտնտեսային արտադրությունում զբաղվածների քանակական փոփոխությունները (1940—1945)[20]

տարի	կոլտնտեսության անդամների թիվը	աշխատունակ կոլտնտեսականներ (16—60 տարեկան)	տարբերություն 1940 թ. համեմատությամբ		տարբերությունը հաջորդ տարվա համեմատությամբ	
			ընդամենը	աշխատունակ	ընդամենը	աշխատունակ
1940	394178	286306				
1941	400188	248651	—6010	—37645	—28780	—26468
1942	371408	222193	—22770	—64113	—70	—3610
1943	371338	225803	—22840	—60503	—6876	—4768
1944	364462	221035	—29716	—85271	—10959	—13970
1945	375421	235005	—18757	—51301		

Աղյուսակից երևում է, որ 1940 թ. համեմատությամբ 1941 թ. աշխատունակ կոլտնտեսականների թիվը կրճատվեց 13,2%-ով, 1942 թ. նախորդ տարվա համեմատությամբ կոլտնտեսության անդամների թիվը կրճատվեց 7, աշխատունակներինը՝ 10,6, իսկ 1943 թ. համեմատությամբ՝ 1944 թ. համապատասխանաբար 1,8 և 2%-ով։ Միայն պատերազմի վերջին տարում նախորդ տարվա համեմատությամբ աշխատունակների թիվն աճեց 6, իսկ կոլտնտեսության անդամներինը՝ 3%-ով։ Չնայած աճի տեմպերին, այնուամենայնիվ, այն չհասավ նախապատերազմյան մակարդակին։ Մինչդեռ ժողովրդական

17 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 113, թ. 14։

18 Նույն տեղում, գ. 14, թ. 23։

19 Նույն տեղում, ց. 16, գ. 14, թ. 19, գ. 17, թ. 8։

20 Աղյուսակը կազմվել է նույն արխիվի (ց. 21, գ. 1146, թ. 6, գ. 1147, թ. 2, գ. 1148, թ. 1, գ. 1149, թ. 1) տվյալների հիման վրա։

տնտեսության մեջ ընդգրկված բանվոր-ծառայողների թիվը 1945 թ. արդեն վերականգնվել էր[21]։ Բնականաբար հարց է առաջանում, թե ինչու ժողովրդական տնտեսության այս ճյուղում վերականգնվեց մինչպատերազմյան մակարդակը, իսկ կոլտնտեսային արտադրությունում՝ ոչ։ Դրա պատճառներից մեկը գյուղատնտեսությունից աշխատուժի անընդմեջ հոսքն էր դեպի պետական արտադրություն։ Տվյալները վկայում են, որ պատերազմի տարիներին կոլտնտեսային աշխատունակ բնակչության թիվը կրճատվեց 51301 մարդով[22]։ Նրանցից 5137-ը պետական արտադրություն էր մտել տարերային ճանապարհով[23], մոտ 6,5 հազարը՝ աշխատանքային ռեզերվների միջոցով[24], իսկ մյուսների որոշ մասը՝ պարտադիր մոբիլիզացումով։

Ինչպես տեսնում ենք, գյուղական բնակչության գերակշիռ մասը պետական արտադրություն էր մտել կազմակերպված ձևով։ Դա բխում էր պատերազմական դրության անհրաժեշտությունից։ Այն թույլ էր տալիս հավասարակշռություն ձեռք բերել առկա աշխատուժի և դրա նկատմամբ արտադրության պահանջների մեջ։ Առանց այդպիսի համապատասխանության պատերազմի տարիներին հնարավոր չէր իրականացնել տնտեսության վերարտադրության պրոցեսը։ Դա միաժամանակ հնարավորություն էր տալիս աշխատուժն ընդգրկել ժողովրդական տնտեսության այն ճյուղերում, որոնք թիկունքն ու ռազմաճակատն անհրաժեշտ միջոցներով զինելու հիմնական աղբյուրներն էին։

Այսպիսով, չնայած պատերազմական դրության հետևանքով գյուղատնտեսությունը կանգնած էր տեխնիկայով ու աշխատուժով ապահովվելու ծանր պրոբլեմի առաջ, այնուամենայնիվ, կոլտնտեսային գյուղացիությունն իր աշխատանքային ռեզերվների մի մասը տրամադրեց ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերին։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո էլ պետական արտադրության մեջ կոլտնտեսային գյուղացիությանն ընդգրկելու հարցը չկորցրեց իր կարևորությունը։ Խաղաղ զարգացման տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրի իր դերը կատարում էր գյուղական աշխատունակ բնակչության ավելացման պայմաններում։ Արխիվային վավերագրերից երևում է, որ զորացրման, սփյուռքահայության ներգաղթի և այլ հանրապետություններից կատարված մեխանիկական տեղաշարժերի հետ կապված, հանրապետության գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության թիվը զգալիորեն աճել էր։ Ըստ այդ տվյալների, 1945 թ. համեմատությամբ 1948 թ. կոլտնտեսության անդամների և աշխատունակների թիվը համապատասխանաբար աճել է 31 և 34,6 հազար մար-

---

21 Նույն տեղում, ց. 15, գ. 179, թ. 8—21, գ. 208, թ. 21—39, գ. 221, թ. 1, գ. 223, թ. 14—40, գ. 240, թ. 130—135, գ. 243, թ. 1—2, գ. 252, թ. 60—61։

22 Հաշվարկը կատարվել է ըստ աղյուսակի տվյալների։

23 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1146, թ. 6, գ. 1147, թ. 2, գ. 1148, թ. 1, գ. 1149, թ. 1։

24 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 591, ց. 8, գ. 411, թ. 24—27, գ. 412, թ. 19—26, 29—35, գ. 483ա, թ. 13) տվյալների հիման վրա։

գով[25]։ Սակայն դրանից չի հետևում, թե 4-րդ հնգամյակի առաջին երեք տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը դադարել էր բանվոր դասակարգի շարքերը համալրելուց։ Ավելին, գյուղատնտեսության մեջ կատարված տեխնիկատնտեսական առաջընթացի հետևանքով գյուղացիության հոսունությունը դեպի պետական արտադրություն կատարվում էր ավելի բարձր տեմպերով։ Բավական է ասել, որ 1946—1948 թթ. մոտ 5 հազար մարդ, զանազան պատճառներով դուրս գալով կոլտնտեսային արտադրությունից, մտել էր պետական արտադրություն[26], իսկ պրոֆտեխնիկական կրթության սիստեմի միջոցով՝ ավելի քան 6,4 հազար մարդ[27]։ Բանն այն է, որ նշված տարիներին կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թվի աճը վերը նշված պատճառներով գերազանցում էր հոսունության տեմպերը։ Այդ պատճառով էլ պետական արտադրություն մտնող գյուղացիության տեղաշարժը կատարվում էր զրեթե աննկատ։

Նախորդ երեք տարիների համեմատությամբ 1949—1950 թթ. օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով հանրապետությունում դիտվել են գյուղացիության հոսունության բարձր տեմպեր։ Այդ տարիներին կոլտնտեսային արտադրությունում զբաղված գյուղացիության թիվը կրճատվեց մոտ 15,3 հազարով[28]։ Բերված տվյալների հանրագումարը ցույց է տալիս, որ հետպատերազմյան հինգ տարիներին կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թիվը կրճատվել է մոտ 26,7 հազարով։ Լինելով գերազանցապես ֆիզիկական աշխատանք կատարողներ, նրանք հիմնականում անցել են բանվոր դասակարգի շարքերը։

Ինչպես արդեն նշել ենք, հետպատերազմյան տարիներին գյուղական բնակչության թիվը զգալի չափով ավելացավ։ Ընդարձակվեց ու ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ Բացի այդ, նկատենք, որ, ի տարբերություն պատերազմական ժամանակաշրջանի, պետական արտադրությունը կորցրել էր աշխատուժի նկատմամբ ունեցած պահանջի սրությունը։ Այս ամենի հետևանքով էապես փոխվեցին ինչպես բանվոր դասակարգի համալրման ձևերը, այնպես էլ՝ ուղղությունը։ Արդեն նշել ենք, որ պատերազմի տարիներին համալրման հիմնական ձևը (կազմակերպված) բնակչության պարտադիր մոբիլիզացումն էր։ Խաղաղ շինարարության տարիներին այն իր տեղը զիջեց հավաքագրմանը։ Հենվելով համալրման հիշյալ ձևերի վերաբերյալ եղած համապատասխան տվյալների բազմակողմանի քննության վրա, կարելի է եզրակացնել, որ ինչպես պարտադիր մոբիլիզացումը, այնպես էլ հավաքագրումը համարժեք են այնքանով, որքանով ծառայել են բանվոր դասակարգի քանակական աճին։ Մյուս եզրակացությունն ան է, որ այդ համարժեքությունը երկակի բնույթ ունի. եթե պարտադիր մոբիլիզացումը տարածվում էր աշխատունակ ամբողջ բնակչության վրա, անկախ աշխատանքային տարիքի ակտիվությունից, ապա հավաքագրումը՝ միայն աշխատանքային ակտիվ հասակ ունեցողների վրա։ Ավելացնենք նաև, որ, ի տարբերություն պարտա-

25 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 163, ց. 21, գ. 1149, թ. 1, գ. 1150, թ. 1, գ. 1151, թ. 1) տվյալների հիման վրա։

26 Նույն տեղում, գ. 1151, թ. 1, գ. 1152, թ. 1, գ. 1153, թ. 1։

27 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 591, ց. 2, գ. 1, թ. 2—3, ց. 7, գ. 16, թ. 6) տվյալների հիման վրա։

28 Նույն տեղում, ֆ. 163, ց. 21, գ. 1151, թ. 1, գ. 1152, թ. 1, գ. 1153, թ. 1։

դիր մոբիլիզացման, հավաքագրման միջոցով բանվոր դասակարգը համալրվում էր պատրաստի կադրերով, որոնք ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերն էին ընդգրկվում միանգամից կամ աշխատանքային ռեզերվների հաստատություններն ավարտելուց հետո։ Սակայն վերը շարադրվածից չպետք է ենթադրել, թե համալրման գլխավոր ճանապարհը հավաքագրումն էր։ Նախապատերազմական ժամանակաշրջանի նման այդ դերը իրականացնում էր անկազմակերպ ձևը։ Համոզվելու համար բերենք մի քանի տվյալներ։ Ինչպես վերևում նկատեցինք, 1946—1950 թթ. կոլտնտեսային գյուղացիությունից բանվոր դասակարգի շարքերն են համալրել 27,7 հազար մարդ, որը կազմել է այդ տարիներին բանվոր դասակարգի քանակական աճի 35,5%-ը[29]։ Այդ թվից մոտ 6 հազարը կամ 7,4%-ը բաժին է ընկնում զանազան պատճառներով կոլտնտեսություններից վտարվածներին, 10,7 հազարը կամ 13,2%-ը՝ աշխատանքային ռեզերվների հաստատություններին[30], իսկ մնացածը՝ անկազմակերպ հոսունությանը։ Ստացվում է, որ կոլտնտեսություններից պետական արտադրություն ընդգրկվածների 70%-ից ավելին բաժին է ընկնում անկազմակերպ հոսունությանը։

5-րդ հնգամյակի առաջին երեք (1951—1953) տարիներին Հայկական ՍՍՀ կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատման միտումն ինտենսիվ բնույթ կրեց։ Այդ երևույթի պատճառը շարունակում էր մնալ կոլտնտեսային արտադրության արտադրողականության շարունակաբար բարձրացումը։ Իհարկե մենք հակված չենք կարծելու, թե կոլտնտեսային գյուղացիության տեղաշարժերի հիմքում սուբյեկտիվ պատճառներ գոյություն չեն ունեցել։ Այդ տեսակետից կարելի է արձանագրել թեկուզ այն փաստը, որ կոլտնտեսային արտադրության զարգացման և նրա եկամտաբերության ավելացման գործում նվազել էր աշխատողների նյութական շահագրգռվածությունը, թուլացել հանրային ու անձնական շահերի զուգակցումը։ ՍՄԿԿ կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումը քննարկեց երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին հարցը և ընդունեց համապատասխան որոշումներ[31]։ Դրանք նոր թափ հաղորդեցին նաև ՀՍՍՀ գյուղատնտեսության հետագա զարգացմանը։ Այդ և հետագա միջոցառումները (ՄՏԿ-ների վերածումը ՆՏԿ-ների, գյուղատնտեսության վերազինումը և այլն) բարենպաստ պայմաններ ստեղծեցին գյուղացիության (կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների) քանակազմը կայունացնելու համար։ Այսպես, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1951—1958 թթ., ի հաշիվ կոլտնտեսային գյուղացիության, բանվոր դասակարգի թիվը ավելացել է 36 հազարով, որը կազմում է այդ տարիներին նրա քանակական աճի 30%-ը[32]։

---

29 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 163, ց. 21, գ. 1149, թ. 1, գ. 1150, թ. 1, գ. 1151, թ. 1, գ. 1152, թ. 1, գ. 1154, թ. 1, գ. 1155, թ. 2) և «Труд в Армянской ССР» ժողովածուի 29-րդ էջի տվյալների հիման վրա։

30 Հաշվարկը կատարվել է նույն արխիվի (ֆ. 591, ց. 8, գ. 411, թ. 24—27, գ. 412, թ. 19—26, 29—35, գ. 418, թ. 2—109, գ. 483ա, թ. 13) և «Народное хозяйство Армянской ССР в 1964 г. (Ереван, 1965, с. 188) ժողովածուի տվյալների հիման վրա։

31 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս III, էջ 775—776։

32 Հաշվարկը կատարվել է «Сельское хозяйство Армянской ССР» (с. 458—459) և «Труд в Армянской ССР» (с. 29) ժողովածուների տվյալների հիման վրա։

Նոր սովխոզների ստեղծման ճանապարհով արագորեն աճեց նաև բանվոր դասակարգի գյուղական ջոկատի թիվը։ Դա առաջ բերեց գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կազմի զգալի փոփոխություն։ Բանվոր-ծառայողների թիվը հանրապետության գյուղական բնակչության մեջ 1959 թ. կազմեց 30,5%, որից 19,5%-ը բանվորներ էին, իսկ 11%-ը՝ ծառայողներ[33]։

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ կոլտնտեսային գյուղացիությունը պահպանել է առաջատար աղբյուրի իր դերը։ Դեպի պետական արտադրություն կոլտնտեսային գյուղացիության տեղաշարժերի հիմքը կազմել և կազմում են գյուղատնտեսական աշխատանքների շարունակաբար մեքենայացումն ու ինտենսիվ զարգացումը և նոր աշխատուժի նկատմամբ սոցիալիստական արտադրության պահանջների մեծացումը։

КОЛХОЗНОЕ КРЕСТЬЯНСТВО АРМ. ССР — ИСТОЧНИК ПОПОЛНЕНИЯ РАБОЧЕГО КЛАССА (1939—1959)

ГАМЛЕТ АРУТЮНЯН

Резюме

В период упрочения и развития социализма в Армянской ССР колхозное крестьянство являлось основным источником пополнения рабочего класса республики, что объясняется преобладанием крестьянства в составе населения и его социально-экономическим положением. Причинами перемещения колхозного крестьянства являлись непрерывная механизация и интенсивное развитие сельского труда, а также увеличение потребности в рабочей силе в социалистическом производстве. Колхозное крестьянство пополняло ряды рабочего класса двумя путями: организованно (через систему трудовых резервов и преобразования колхозов в совхозы) и неорганизованно. Второй путь доминировал, что объясняется объективными трудностями, связанными с сельскохозяйственным производством и недостатками, имевшими место в руководстве этим производством.

---

33 «Итоги Всесоюзной переписи населения 1959 г., Армянская ССР», М., 1959, с. 28—29.